

շիստան այցելող Երուսաղէմը նուիրակ Գրիգոր եպս.ը, որ ոչ միայն պատուով ընդունուած, այլ նաեւ ազատօրէն քարոզչութիւն ըսած էր, հաւանաբար նոյնիսկ ընդդէմ կսթղիկութեան, վասնզի պատժագիրը որոշ կ'ըսէ. թէ «Բարոյութեամբ իւրով հասցատեաց զամենեւեան 'ի դաւանութիւն Հայոց եւ Ասորոց». այսինքն միսքնակութեան մէջ. որուն կը հետեւինք մենք Ասորոց, Սպարսերու եւ Հապէշներու հետ»:

Գրիգոր եպս., իբր նուիրակ Երուսաղէմի, Հապէշիստանի մէջ չէր կրնար ռեւէ կասկածի ենթարկուիլ, վասնզի Հապէշները Երուսաղէմի մեր պատրիարքութեան հետ կապ ունին եւ Ս. Տեղեաց մէջ մեզի հետեւորդ են:

Յովհաննէս Թիւթիւնճի, որ հաւանօրէն Եւրոպայէն կու գար, որոշ հանգամանք մը չունէր. բայց, ինչպէս կը տեսնուի. մեծարուած էր կայսրէն, որմէ իր վերադարձին առթիւ ուլ յանձնարարական գիր ըստացած էր (ոսա տղ 182). ինչ որ անգամ մըն ուլ կու գայ հաստատել, թէ անիկա Եթովպիոյ արքունիքին հետ բանակցած էր կամ գէթ անոր ծանօթ եղած:

Տրուած ըլլալով, որ ունինք յիշատակարան մը, ուր կը կարգանք սա խորհրդաւոր բառերը. թէ «յետոյ այս վարդապետն եղել զլուս ազգին Ֆրանկաց եւ եկն ի վերայ քուրբին» ամէն իրաւունք ունենալ կը կարծենք ենթադրելու, թէ Յովհաննէս Թիւթիւնճիի դէպի Հապէշիստան այս առաքելութիւնը կապ ունէր Թուրքերու դէմ մղուած պայքարին եւ Թուրքին վրայ գալու նախապատրաստութիւն մըն էր, եթէ ոչ ճշմարիտ արչաւ մը, զոր իրագործելու չեմ կարծեր թէ առիթը ունեցած ըլլայ այս արկածախնդիր եկեղեցականը, որ գործնապէս եթէ այս տեսակ ձեռնարկ մը կատարած ըլլար, իր կեանքին վերջին տարիները Տրապիզոն անցնելու պիտի չհամարձակէր: